ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «02» մայիսի 2026թ № 924-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 1845-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունսի 1-ի N 658-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի հուլիսի 23-ի ««Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի շրջանակներում պետության կողմից դրամաշնորհի ձեվով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների և պետական աջակցության գումարի տրամադրման վերաբերյալ պայմանագրերի մասին» N 1845-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները.

1) Հրամանի 1-ին կետը լրացնել նոր 3-րդ և 4-րդ ենթակետերով՝

«3. Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի շրջանակում կնքվող պետական աջակցության գումարի տրամադրման վերաբերյալ պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի շրջանակում կնքվող պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների վերաբերյալ պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:»:

2) Հրամանը լրացնել նոր՝ N3 և N4 հավելվածներով՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի հուլիսի 23 -ի
N 1845 -Լ հրամանի

«Հավելված N 3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի ապրիլի 2-ի
N 924-Լ հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան « »_____2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի _____ (այսուհետ՝ Նախարարություն), ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ_____մարզի _____ համայնքի ղեկավար _____ (այսուհետ՝ Համայնք) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով՝ Նախարարությունը աշնանացան ցորենի ցանք կատարած և մոնիթորինգի դրական եզրակացությամբ շահառուների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, Ծրագրի 11-րդ կետով սահմանված սահմանաչափով շահառուներին փոխհատուցման ենթակա գումարը հատկացնում է Համայնքին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Նախարարությունն իրավունք ունի՝**

2.1.1. Փոխհատուցման համար նախատեսված գումարները չտրամադրել Համայնքին, եթե ներկայացված տեղեկատվության մեջ առկա են ակնհայտ կեղծիքներ,

2.1.2. Ամփոփել ծրագրի 23-րդ կետում նշված տեղեկատվությունը և մոնիթորինգի արձանագրությունները՝ դրանք ստանալուց հետո 25 աշխատանքային օրվա ընթացքում, որի

արդյունքում, ի հայտ եկած անճշտությունների դեպքում, վերադարձնել Համայնքին՝ առավելագույնը 20 աշխատանքային օրվա ընթացքում թերությունները շտկելու և կրկին դիմում ներկայացնելու նպատակով կամ փոխհատուցման համար նախատեսված գումարները փոխանցել Համայնքի հաշվեհամարներին,

2.1.2. Մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացված մոնիթորինգի բացասական արդյունքների առկայության դեպքում (ծրագրի պայմանների կամ Ծրագրի 15-րդ կետում նշված պայմանագրի դրույթների խախտում) չտրամադրել փոխհատուցման գումարը, իսկ տրամադրված լինելու դեպքում՝ Համայնքին ներկայացնել պետական բյուջե հետվերադարձման պահանջ՝ շահառուին փոխհատուցված գումարների մասով,

2.1.3. Փոխհատուցման գումարը տրամադրված լինելու դեպքում Համայնքին ներկայացնել պետական բյուջե հետվերադարձման պահանջ շահառուին փոխհատուցված (համայնքին գումարը հետ է վերադարձնում շահառուն) գումարների մասով:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 Համայնքի կողմից մոնիթորինգի դրական արդյունքները և շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց և Ծրագրով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ Ծրագրով սահմանված պահանջների խախտումներ չարձանագրելու դեպքում փոխհատուցման գումարները փոխանցել Համայնքին,

2.3. Համայնքն իրավունք ունի՝

2.3.1. Նախարարությունից պահանջել փոխհատուցման համար նախատեսված գումարները, եթե Ծրագրի 20-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը սահմանված ժամկետում առանց թերությունների ներկայացրել է Նախարարություն:

2.4. Համայնքը պարտավոր է՝

2.4.1. Նախարարությանը տրամադրել հավաստի տեղեկատվություն իրականացված մոնիթորինգի արդյունքների, շահառուների ինչպես նաև փոխհատուցման գումարների վճարման ցուցակների և վճարումը հավաստող փաստաթղթերի վերաբերյալ՝ Ծրագրով սահմանված կարգով ու ժամկետներում և համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի ապրիլի 18-ի ««Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի մասնակցության պայմանագրի, շահառուների վերաբերյալ տեղեկատվության ձևաչափի օրինակելի ձևը և մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին» N 1141-Լ հրամանի,

2.4.2. Նախարարության կողմից փոխհատուցման համար նախատեսված գումարը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել շահառուների բանկային հաշվեհամարներին,

2.4.3. Մինչև 2026 թվականի դեկտեմբերի 1-ը Նախարարություն ներկայացնել ամփոփ հաշվետվություն՝ ծրագրի շրջանակում, ըստ մշակաբույսերի կատարված ցանքատարածությունների, միջին բերքատվության և համախառն բերքի վերաբերյալ,

2.4.4. Մարզպետի աշխատակազմի կողմից իրականացված ընտրանքային մոնիթորինգի բացասական արձանագրության դեպքում, մինչ այդ տրամադրված փոխհատուցման

գումարները մեկամսյա ժամկետում վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի «Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին» N 283-Ն որոշումը:

3 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի գինը ձևավորվում է Համայնքի կողմից ներկայացված՝ մոնիթորինգի դրական եզրակացության ու շահառուների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա և սահմանվում է գրավոր համաձայնությամբ:
3.2. Փոխհատուցման համար նախատեսված գումարները փոխանցվում է Համայնքին՝ անկանխիկ եղանակով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. ՀՀ _____մարզի _____ համայնքը պարտավորվում է իրականացնել Ծրագրով իրեն վերապահված գործառույթները ամբողջությամբ և պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված տեղեկատվության համար, իսկ Նախարարությունը պարտավորվում է Համայնքի կողմից ներկայացված տեղեկատվության և մոնիթորինգի դրական եզրակացության հիման վրա համապատասխան ֆինանսական միջոցները փոխանցել Համայնքին:
4.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

5.1. Համայնքը Ծրագրի իրականացման ընթացքում, Ծրագրով սահմանված ժամկետներում իրականացնում է համատարած մոնիթորինգ:
5.2. Մոնիթորինգն իրականացվում է մինչև տվյալ մշակաբույսի բերքահավաքը՝ Համայնքի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից:
5.3. Մոնիթորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի ապրիլի 18-ի ««Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի մասնակցության պայմանագրի, շահառուների վերաբերյալ տեղեկատվության ձևաչափի օրինակելի ձևը և մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին» N 1141-Լ հրամանով հաստատված կարգի համաձան:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և Կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից և 4 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ,

8.2. Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են Ծրագրով սահմանված պահանջներով:

8.3. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ՝ Ծրագրի պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՄԱՅՆՔ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն **Հասցե՝** **0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5** **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** **Հ/Հ 900011053528** **ՀՎՀՀ 02698604** **ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար** _____ **(ստորագրություն) Կ. Տ.**	**ՀՀ _____ մարզի _____ համայնք** **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** **Հ/Հ** **ՀՎՀՀ** **ՀՀ _____ մարզի _____.** **համայնքի ղեկավար** _____ **(ստորագրություն) Կ. Տ.»:**

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի հուլիսի 23-ի
N 1845-Լ հրամանի

«Հավելված N 4
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի ապրիլի 2-ի
N 924-Լ հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «____» _____ 2026 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի_____(այսուհետ՝ Նախարարություն), ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ _____ մարզի _____ համայնքի ղեկավար _____(այսուհետ՝ Համայնք) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով՝ Համայնքը կիրականացնի աշնանացան ցորենի ցանքերի համատարած մոնիթորինգ՝ իսկ Նախարարությունը իրականացված մոնիթորինգի համար նախատեսված գումարները կփոխանցի Համայնքին Ծրագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. Մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացված մոնիթորինգի բացասական արդյունքների առկայության դեպքում (Ծրագրի պայմանների կամ Ծրագրի 15-րդ կետում նշված պայմանագրի դրույթների խախտում) չտրամադրել փոխհատուցման գումարը, իսկ

տրամադրված լինելու դեպքում՝ Համայնքին ներկայացնել պետական բյուջե հետվերադարձման պահանջ՝ շահառուին փոխհատուցված գումարների մասով,

2.1.2. Հետվերադարձման պահանջ ներկայացվելու դեպքում շահառուի կողմից Համայնքին 1-ամսյա ժամկետում գումարները չվճարելու պարագայում այն գանձել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի «Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին» N 283-Ն որոշումը,

2.1.3. Համայնքի կողմից ներկայացված մոնիթորինգի արձանագրություններում ակնհայտ խախտում հայտնաբերելու դեպքում մոնիթորինգի համար տվյալ պայմանագրի շրջանակում փոխհատուցման գումար չտրամադրել, իսկ տրամադրված լինելու դեպքում Համայնքին ներկայացնել պետական բյուջե հետվերադարձման պահանջ շահառուին փոխհատուցված (համայնքին գումարը հետ է վերադարձնում շահառուն) գումարների մասով,

2.1.4. Համայնքից պահանջել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ,

2.1.5. Ամփոփել Ծրագրի 23-րդ կետով նշված տեղեկատվությունը և մոնիթորինգի արձանագրությունները՝ դրանք ստանալուց հետո 25 աշխատանքային օրվա ընթացքում, որի արդյունքում ի հայտ եկած անճշտությունների դեպքում վերադարձնել համայնքին՝ առավելագույնը 20 աշխատանքային օրվա ընթացքում թերությունները շտկելու և կրկին դիմում ներկայացնելու նպատակով:

2.2. Համայնքն իրավունք ունի՝

2.2.1. Շահառուների վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու պարագայում՝ Նախարարությունից պահանջել շահառուների տնտեսություններում իր կողմից իրականացված մոնիթորինգի համար նախատեսված գումարները:

2.3. Նախարարությունն պարտավոր է՝

2.3.1. Համայնքի կողմից մոնիթորինգի դրական եզրակացության և տեղեկատվության ներկայացման դեպքում, Ծրագրով սահմանված կարգով իրականացված մոնիթորինգի համար նախատեսված գումարները փոխանցել Համայնքին:

2.4. Համայքնապետարանը պարտավոր է՝

2.4.1. Ծրագրի 23-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել մոնիթորինգ,

2.4.2. Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով կատարել տրված գրավոր և բանավոր ցուցումները,

2.4.3. Նախարարությանը 2.4.1 կետով սահմանված մոնիթորինգի իրականացումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել համապատասխան տեղեկատվությունը,

2.4.4. Մարզպետարանի կողմից ներկայացված մոնիթորինգի բացասական արդյունքների առկայության և շահառուին փոխհատուցման գումարները տրամադրված լինելու դեպքերում Նախարարության կողմից Համայնքին պետական բյուջե հետվերադարձման պահանջի պարագայում՝ իրականացված մոնիթորինգի համար ստացված գումարները՝ մեկամսյա ժամկետում վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010

թվականի նոյեմբերի 9-ի «Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին» N 283-Ն որոշումը:

3. Մոնիթորինգը

3.1. Համայնքը Ծրագրի իրականացման ընթացքում, Ծրագրով սահմանված ժամկետներում իրականացնում է համատարած մոնիթորինգ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի ապրիլի 18-ի ««Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի մասնակցության պայմանագրի, շահառուների վերաբերյալ տեղեկատվության ձևաչափի օրինակելի ձևը և մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին» N 1141-Լ հրամանով հաստատված կարգի համաձայն:
3.2. Մոնիթորինգն իրականացվում է Համայնքի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրի գինը ձևավորվում է Համայնքի կողմից իրականացված մոնիթորինգի դրական արձանագրությունից հետո՝ փոխհատուցված գումարի երեք տոկոսի չափով և սահմանվում է գրավոր համաձայնությամբ:
4.2. Նախարարության կողմից մինչև 2026 թվականի նախավերջին աշխատանքային օրը՝ ներառյալ մոնիթորինգի իրականացման համար նախատեսված գումարները փոխանցվում է համայնքների հաշվեհամարներին՝ անկանխիկ եղանակով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. ՀՀ _____ մարզի_____ համայնքը պարտավորվում է իրականացնել Ծրագրով իրեն վերապահված գործառույթներն ամբողջությամբ, իսկ Նախարարությունը պարտավորվում է Համայնքի կողմից իրականացված մոնիթորինգի համար նախատեսված ֆինանսական միջոցները փոխանցել Համայնքի համապատասխան հաշվեհամարին,
5.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:
6.2. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 2 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից և 4 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ,
8.2. Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են Ծրագրով սահմանված կարգով,
8.3. Պայմանագրում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՄԱՅՆՔ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն **Հասցե՝** **0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5** **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** **Հ/Հ 900011053551** **ՀՎՀՀ 02698604** **ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար** _____ (ստորագրություն) Կ. Տ.	**ՀՀ _____ մարզի _____ համայնք** **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** **Հ/Հ** **ՀՎՀՀ** **ՀՀ _____ մարզի _____.** **համայնքի ղեկավար** _____ (ստորագրություն) Կ. Տ.»: